ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սեպտեմբերի 28-ին լրացավ **Վեհափառ Հայրապետի** բարեբաստիկ գահակալության 20-րդ տարեդարձը:

Գերագույն հոգևոր խորհուրդը փետրվարի 11-ի իր նիստում որոշել է Նորին Սրբության գահակալության 20-ամյակը համազգային շուքով նշել առաջիկա տարի՝ 1976 թվականի սեպտեմբերի 29-ին, սրբալույս մյուռոնի օրհնության հանդիսավոր առիթով:

Այս տարի էլ Վեհափառ Հայրապետի գահակալության 20-րդ տարեդարձի առիթով Մայր Աթոռ էին ժամանել հյուրեր, այդ թվում՝ Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ **տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը,** Կանադայի հայոց առաջնորդական փոխանորդ **տ. Արիս եպս. Շիրվանյանը** և բազում ուխտավորներ սփյուռքից:

Սեպտեմբերի 28-ին, կիրակի օրը, հայրապետական գահակալության 20-ամյակի առիթով, Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում **տ. Արսեն եպս. Բերբերյանը:**

Ժամը 12-ին հոբելյար Հայոց Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Մայր տաճար, ուր աջակողմյան և ձախակողմյան դասերում տեղ են գրավել սփյուռքահայ բազում ուխտավորներ և հրավիրյալներ, այդ թվում՝ Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ **պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանը, դոցենտ Հովհաննես Թոփուզյանը,** Վերատուգիչ հանձնաժողովի անդամ **Եփրեմ Ալեքսանյանը,** Կյուլպենկյան հիմնարկության (Լիսաբոն) հայկական գործերի բաժնի վարիչ **Կորյուն Քեշիշյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ, տեր և տիկին Գեղամ Տանձիկյանները՝** Բեյրութից, **Տիգրան Մյուրաթյանը՝** Բուենոս-Այրեսից, և ուրիշներ:

Մայր տաճարը լիքն է աղոթավոր, բարեպաշտ հավատացյալներով:

Ս. պատարագի եկմալյան երգեցողությունն ապրումով կատարում է Մայր տաճարի երգչախումբը՝ շնորհալի ղեկավարությամբ խմբավար **Խորեն Մելխանեջյանի:**

«Հայր մեր»-ից առաջ բովանդակալից և ոգեշունչ քարոզ է խոսում պատարագիչ տ. Արսեն եպիսկոպոսը՝ «Յաղթող և սուրբ Հայրապետ, նման մեծին Մովսիսի» շարականի բնաբանով, և վեր հանում անցնող քսան տարիների ընթացքում Հայոց Հայրապետի ծավալած եկեղեցական, մշակութային, հայրենասիրական և խաղաղասիրական գործունեության կարևորությունը մեր այսօրվա ազգային-եկեղեցական տարեգրության մեջ:

Քարոզիչ սրբազանն իր քարոզն ավարտում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի անսասանության, պայծառության և նրա արժանընտիր, առաքելաշավիղ Գահակալի թանկագին կենաց արևշատության սրտագին մաղթանքներով:

Հավարտ ս. պատարագի հանդիսավո-

թությամբ կատարվում է հայրապետական մաղթանք:

Այնուհետև Վեհարանում Հայոց Հայրապետն Իր գահակալության ուրախ առիթով ընդունում է ջերմագին շնորհավորություններ և բարեմաղթություններ սփյուռքահայ ուխտավորների ու հավատացյալների:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տրվում է ճաշկերույթ՝ գահակալության առթիվ:

Ճաշկերույթին ներկա են լինում տ: **Բաբգեն արքեպ. Ապատյանը, տ. Վահան, տ. Արսեն** և **տ. Արիս** սրբազանները, Մեծի Տանն Կիլիկիայի Անթիլիասի Աթոռի միաբաններ **տ. Արամ վրդ. Քեշիշյանը, տ. Զարեհ վրդ. Ազնավորյանը,** Մայր Աթոռի միաբաններ **տ. Գևորգ ծ. վրդ. Կարպիսյանը** (Բեյրութ), **տ. Վազգեն** և **տ. Մասիս վարդապետները, տ. Տիրան, տ. Եզնիկ, տ. Թորգոմ աբեղաները,** հոգևոր ճեմարանի տեսուչ **տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը,** Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ **պրոֆ. Սարգիս Մելիքսեթյանը, դոցենտ Հովհաննես Թոփուզյանը,** Վերստուգիչ հանձնաժողովի նախագահ **Եփրեմ Ալեքսանյանը, «Էջմիածին»** ամսագրի խմբագիր **Արթուն Հատիտյանը,** Մայր Աթոռի ֆինանսական բաժնի վարիչ **Գառնիկ Քեհյայանը** և տնտեսական բաժնի վարիչ **Անդրանիկ Ութուջյանը:**

Ճաշկերույթին ներկա էին նաև **տեր** և **տիկին Կորյուն Քեշիշյանները, տեր** և **տիկին Գեղամ Տանձիկյանները** և **տիար Տիգրան Մյուրաքյանը:**

Հայրապետական գահակալության 20-ամյակի առթիվ տրված պաշտոնական ճաշկերույթին ներկա էին նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի **նախագահ Ս. Գասպարյանն** ու տեղակալ **Ս. Հովհաննիսյանը:**

Սեղանն օրհնեց Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հայրապետի գահակալության 20-ամյակը ջերմորեն և երախտագետ սրտով ողջունեցին **տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը, տ. Արիս եպս. Շիրվանյանը, տ. Գևորգ** և **տ. Արամ վարդապետները:**

Հայոց Հայրապետի գահակալությունը ողջունեց նաև ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի **նախագահ Ս. Գասպարյանը:**

Հայոց Հայրապետը բաժակ բարձրացրեց պրն. Սարգիս Գասպարյանի, պրն. Սուրեն Հովհաննիսյանի հայրենանվեր գործերի հաջողության և բոլոր ներկաների քաջառողջության համար:

Հանդիսության խանդավառությունն ավելացրին **տ. Զարեհ** և **տ. Մասիս վարդապետներն** ու **տ. Թորգոմ** աբեղան՝ մեներգներով և արտասանություններով:

Վեհափառ Հայրապետի գահակալության 20-ամյակի առթիվ տրված ճաշկերույթն ավարտվեց խանդավառ մթնոլորտում, խըմբովին երգված «Հայր մեր»-ով և Նորին Սրբության գոհաբանական աղոթքով: